ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂՆԵՐԻ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

Տիգրան Սահակյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնի տասնամյակին

(Շարունակություն)

Նաև Տիգրան Սահակյանի անվան թատրոնի ստեղծագործական կոլեկտիվի ամենամեծ ձեռքբերումներից մեկը հանդիսացավ Ալեքսանդր Շիրվանզադեի «Դատավոր Կարին» պիեսի բեմադրությունը։ Ներկայացման ռեժիսորն էր Ռուբեն Մամուլյանը, նկարիչը՝ Ռուբեն Ադամյանը, կոմպոզիտորը՝ Ռուբեն Հախվերդյանը։ Ներկայացման գլխավոր դերակատարները՝ Ռուբեն Ադամյանը, Ռուբեն Հախվերդյանը, Ռուբեն Մամուլյանը,

ՈՒՐԲԱԹԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԴՎՑԱԿԱՆ

Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Ես ծնվել եմ Ալաշկերտի դաշտում, Մեծ Մասիսի ստվերի տակ։ Ես ծնվել եմ Արարատյան դաշտում, Մեծ Մասիսի ստվերի տակ։ Ես ծնվել եմ Արարատյան դաշտում, Մեծ Մասիսի ստվերի տակ։

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ, 15 ՀՈՒՆԻՍԻ

ԴԱՏԱԿԱՆ ՈՒԺԵՐ

(Շարունակություն)

Տիվիսոն Հ[ովսեփ] Ջ[ոն]սոն Ա[լեքսանդր] Ռ[ոբերտ] Ռ[ոբերտսոն] Ռ[ոբերտսոն] Ռ[ոբերտսոն

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Կիւրակէ, ամսոյս 25-ին պ. դպետր Գրիգոր Արծրունին թիֆլիզի կլուբում կըրկնեց իւր դասախօսութիւնը «Թիւրքայ Հայերի տնտեսական դրութեան մասին»։

Այս անգամ դահլիճը դատարկ էր կիսով չափ։ Մենք կարծում էինք, թէ պ. դպետրը իւր առաջին փորձից օգուտ քաղելով աւելի կենդանութիւն կտայ իւր դասախօսութեանը, բայց սխալուեցանք. գրեթէ նոյն անկապ և խառն ու չփոթ պատմութիւնն էր մեր լսածը. այն ինչ նա կարող էր շատ հեշտ կերպով կարդալ, մանաւանդ առաջին մասը, որ շատ անմշակ նիւթեր միայն և որ նոյն իսկ պարոն դասախօսը, ինչպէս պարզ երևեցաւ՝ չէր մարսել միանգամայն։ Մենք չենք հասկանում, թէ ինչ նպատակով պարոնը կարծես գիտութեամբ ձգձգում էր հարցը և ինչու իրեան տիրել չէր կարողանում — անդադար չփոթվում և այս և այն կողմն ընկնում — փոխանակ պարզ կարդալու, որ անշուշտ աւելի տպաւորութիւն կը գործէր և աչքաւոր կը լսէին ունկնդիրները։

Ուշադրութեան արժանի էր այս անգամ իշխան Մ. Բէհբուտեանի նկարած Հայաստանի քարտէզը, որի վերայ պ. դասախօսը ցոյց էր տալիս նշանակած քաղաքները, բայց այնպէս չփոթուելով և խառնուելով, որ մի անգամ Երզնկայ քաղաքը քիչ մնաց Պարսկաստանում ցոյց տար և մեծ դժուարութեամբ ի վերջոյ գտաւ. իսկ այն տեղերը, որոնք քարտիզի վերայ նշանակած չէին, չէր ցոյց տալիս, ասելով թէ քարտիզի վերայ չեն նշանակուած. կարծես թէ չը նշանակուածը, մի և նոյն ժամանակ և չը կայ։

Բերլինի վեհաժողովի անուշադրութեամբ թողնելը Հայոց հարցի, դարձեալ Անգղիայի քաղաքականութեանը վերաբերելով և կրկնելով իւր անհիմն և տրգէտ կարծիքը Անգղիայի ցանկութեան մասին, իւր աղքատ պրօլետարիատը Հայաստան ուղարկելու վերաբերութեամբ, պարոնը այս անգամ աւելացրեց և մի պատահական կարծիք. թէ գուցէ Հայերի անմիաբան ոգին, նախանձը և ոխը քանդեցին Հայոց յոյսերը և Եւրոպան տեսնելով այս՝ որոշեց, որ Հայերը քաղաքականապէս դեռ զարգացած չեն. բայց մինչ կը զարգանան ստրկութեան մէջ — հարցրեց պարոնը աներևոյթ Եւրոպային,

վերաբերութեամբ Հայերի բնաւորութեան յատկանիշին, պարոնը այս անգամ պարզեց իւր միտքը, որ առաջին դասախօսութեան ժամանակ անորոշ մնաց, Նա ասաց, որ Հայերը պէտք է ցոյց տան Եւրոպային, որ խաղաղ կուլտուրական մաքառմամբ կարելի է հասնել բարօրութեան. այն է՝ Հայը աշխատանքը երջանկութեան ճանապարհ է ընդունում, փոխանակ նոյն երջանկութեան հասնելու Եւրոպային առ այժմ միակ հասնելի՝ զէնքի միջնորդութեամբ և եթէ Հայը զէնք է բանեցնում, միայն պաշտպանուելու համար է և ոչ յարձակողական դիրք բռնելու. Ուրեմն Հայը զէնքով անգամ պատրաստ է պաշտպանելու իւր աշխատանքը, որ հասնի ապագայ բարօրեալ դրութեան և որ հաստատէ և մոցնէ այդ նոր սկզբունքը, փոխանակ զէնքի բուռն սկզբունքի։

—

Բագուից հաղորդում են. Մարտի 11-ին, երեկոյեան ժամի 7 և կիսին հասաւ քաղաքն Ղարսի դիւցազն ց. Դ. Լազարեանցը, որին դիմաւորել էին և քաղաքից դուրս ապասում էին երկու խումբ 6 և 17 վերստի վերայ բաւական ձիաւորներով և 60 կառքից աւելի տղամարդիկներով և գեղեցիկ սեռով։ Այդտեղ ընդունելութեան աղջոյնը եղաւ ուրաներով, շամպայներով և նախաճաշիկով։

—

Բագուից մեզ հաղորդում են. Անցեալ փետրուար ամսի 23-ին տեղիս ցիրկատէր պ. Կօմարովսկին մի ներկայացում տուեց Բագուի Հայոց «Մարդասիրական Ընկերութեան» դպրոցի օգտին, խորհրդական անդամների առաջարկութեան համաձայն, որից գոյացել է զուտ գումար 720 ռբ. 75 կոպ. Պիտի հրապարակական շնորհակալութիւն յայտնած պ. Կօմարովսկուն, որ անվնասն յօժարութեամբ և ուրախութեամբ յանձն առաւ այդ բարենպատակ առաջարկութիւնը առանց ակնկալութեան, առանց մի սեաւ գրոշի. եւ, ընդհակառակն, նոյն ներկայացման աֆիշաների, տոմսակների, մուզիկայի և լուսաւորութեան ծախքն անգամ իւր վերայ էր վերցրել։ Նոյն երեկոյեան ներկայացումը վերջանալուց յետոյ. Ընկերութեան նախագահ մեծ. Ս. Բաղիրեանցը կօմարովսկուն իւր խմբով հրաւիրում է Եւրոպական հիւրանոցը (Hotel d'Europe) և այնտեղ պատրաստ է նոցա, 77 ռուբլուց աւելի ծախք անելով։

Ներկայացման ժամանակ, ասում են, մեծ. պ. Ս. Բաղիրեանցը լօժաներ և տեղեր է վերցրել ուրիշների համար իւր ծախքով։

—

Խմբագրութիւնս ստացաւ յօգուտ Արարատեան ընկերութեան երկու ռուբլի Աղեքսանդրօպոլցի մեծ. պ. Կարապետ Թումոյեանցից, որ խոստանում է նոյն գումարը վճարել ամեն տարի։

—

Յօգուտ Արարատեան ընկերութեան խմբագրութիւնս ստացաւ Ախալցխայի մեծ պ. Ղազարոս Եայլաճանցից 5 ռբ. Խմբագրութեանս մէջ այժմ կայ յօգուտ նոյն ընկերութեան 7 ռուբլի։

—

Ամսոյս 23 գիշերը Սպի վերայ եղաւ երկրորդ անգամ մեծ հրդեհ, որ առաջին հրդեհից պակաս չէր և բաւական անկը և այլ չինութիւնք զոհ գնացին կրակին և բաւական վնաս տուին տէրերին. որովհետև չինութեանց մեծ մասը փայտեայ լինելով՝ ապահոված չէին։

—

Իգդիրից հաղորդում են, որ այնտեղի տղայոց և աղջկանց դպրոցը բաւական բարեկարգ են։ Ուսանողաց թիւը հասանում է 200 տղայոց և 50 օրիորդայս։ 4 ուսուցիչք են դասախօսում։

Էջմիածնայ գաւառապետ մեծ. պ. Խանդամիրեանցն այցելելով այդ դպրոցներին՝ նուիրում է յօգուտ նոցա 30 ռուբլի։

—

Նոյն տեղից գրում են, որ Երկաթ դպրոցների հոգաբարձու պ. Լևոն Տէր Յարութիւնեանցը իւր հանդուցեալ հօր Յարութիւն քահանայի թաղման առթիւ՝ նուիրում է դպրոցներին 50 ռուբլի և յանձն է առել իւր ծախքով 10 տարի չարունակ մի որդեգիր պահելու տղայոց դպրոցում։

—

Իգդիրից դէպի Թիֆլիզ ճանապարհ է ընկնում մեծ. բժիշկ պ. Աղասարեանցն, որին բաւական տեղ ճանապարհ են ընծայում թէ դպրոցների վարչութիւնք և թէ հասարակութիւնը՝ յայտնելու համար իւրեանց շնորհակալութիւնն՝ իբրև իւրեանց դպրոցների գլխաւոր սկզբնապատճառներից մէկին։

—

Նոխուց գրում են, որ այտեղ չերմ օրեր էին, երբ ծառերը ծաղկել և երկիրը կանաչած էին, հեսևել են մարտի 23 ին ցուրտ օրեր և երեք օր սաստիկ ձիւնել է։ Ամեն առարկաների գները բարձացել են, ինչպէս երբէք չեն եղած։

—

Մի քանի բարեսէր երիտասարդներ կազմել են ընկերութիւն Սանահնոյ ղպրոցի աշակերտաց ընթերցանելի գրքեր և դասական պիտոյքը հոգալու համար։

—

Մեղուի մանաւոր յայտարարութիւն տալ ցանկացողները կարող են այսուհետև դառնալ պ. Բ. Շահվերդեանցի լրագրական գործակալութեան, որ գտանվում է «Սուլտան» մագազինում, պ. Միրիմանեանցի անկիւնում, Օկրուժնոյ տուղի տակը։

—

Մեղուի առաջիկայ Համարը տօնի պատճառաւ կը հրատարակվի 7-ին ապրիլի։

ՊԱՏԱՍԽԱՆ

ՅԱՐԳՈՅ ԽՄԲԱԳԻՐ

Ձեր ֆելիետօնիստ Աղուիւնից Գասիթը այս տարուայ Մեղուի № 21-ի մէջ ի թիւս այլոց յարձակուել էր իմ վերայ։ Թէպէտ ֆելիետօնին միայն ֆելիետօնով պէտք է պատասխանել, որը անվայել եմ համարում կոչմանս, [1]) բայց որովհետև գործը վերաբերում է պրամական հաշիւների, ես մի քանի խօսք պարտաւորութիւն եմ համարում ասել։ Իմ անձաւորութեան և գործողութեանս նկատմամբ ես չեմ ուզում խօսել [2]) այժմ, երբ գործը պարզուի, որը ինձանից կախեալ չէ, այլ ժամանակ արդարութիւնը երևան կգայ։ [3]) Այսքանը միայն կասեմ, որ իմ գանձապետութեան բոլոր շրջանումը ֆելիետօնիստիդ եւ րաջած 6—7 հարիւր թումանները ի միասին կոնսիստօրի գանձարանը չէ տեսել և եղածին էլ առանց Բ. Սրբազան Թեմական առաջնորդի հաճութեան մակագրութեան և կոնսիստորի գրաւոր հրամանների՝ ես ոչ մի կոպէկ մէկին չեմ տուած կամ ուղարկած։ Պարզն ասենք, ոչ ուզող եղել և ոչ ուղարկող։ Վիճակի գանձը գործ է գրուել միայն վիճակի վերայ. այնքան չէ աւելացել, որ ֆելիետօնիստիդ ակնարկած տեղերին էլ մասը հասնէր։

Ի վեր տեղը անիրաւացի կերպիւ արատաւորել մի ազգային նուիրատուական հաստատութիւն չէ համապատասխանում ճշմարտասիրութեան սուրբ նպատակին. ի վեր տեղը սառնացնել սուրբ Աթոռի և բարեպաշտ հայ ժողովրդի վրդի քաղցր յարաբերութիւնը [4]), այդ անբարենպատակ մարդու և հայութեանը տապի գործ է։

Խնդրեմ, յարգոյ խմբագիր, այս իմ կարճ պատասխանը բարեհաճեցէք ապել Ձեր լրագրի առաջիկայ համարներից միկում։

Կաղաչեմ «Մշակի» լրագրի պատուական խմբագրութիւնից յարգել իմ խնդիրս, արատապել իմ այս յայտարարութիւնը։

Սարգիս աւագ քահանայ Աղաջանեանց։

Տփխիս։

4) Հայր Սարգիս աւագ քահանայն ա պահով կարող է լինել, որ ոչինչ չէ կարող սառեցնել Հայ ժողովրդեան չերմեռանդութիւնը դէպի Աթոռն ու նորա սրբութիւնքը։ Թող հաւատայ աւագ հայրն, որ Հայ ժողովուրդը փախչում է եկեղեցիից, նոյն իսկ եկեղեցականաց պատճառով, կարծեմ այս նա փորձով էլ դիտէ։ Խմբ.

Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ։

Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ։

ԱՌՁԱ ՏԵՍԱԻ
„ՄԱՆԿԱՎԱԺԱԿԱՆ ԹԵՐԹ„
Ամսագրի եօթերորդ (յունվարի) Թիւը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ I. Մայրենի լեզուի ուսումը. Գործնական մասը (վերջ), Ա. ԲԱՀԱԹՐԵԱՆՑ։ II. Պետալոցի։ III. Ընթերցարանը և նորա նշանակութիւնը դպրոցների մէջ. Ա. ԲԱՀԱԹՐԵԱՆՑ։ IV. Երկու խօսք կ. Պօլսոյ «Մասիս» լրագրի կարծիքի առիթով «Մանկավարժական թերթի» վերայ։

Ստորագրուել կարելի է Տիֆլիզում՝ «Մանկավարժական թերթի» խմբագրատանը և պ. Զ. Գրիգորեանցի ու կենդրոնական գրավաճառանոցներում։ Խմբագրութեան հասցէն՝ Въ Редакцію Армянскаго журнала „Педагогическій Листокъ.

Խմբագիր Յակոբ Տէր-Յովհաննիսեան։

ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՆԴԷՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Մեր ազգայիններից ոմանք հարցնում են ինձ, թէ կը շարունակուի արդեօք այսուհետև «ՓԱՐՈՍ» խմբագրի տպագրութիւնը։ Պատասխանում եմ. այո, կը շարունակուի, միայն «ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ» անուանով և որպէս հանդէս պատկերազարդ (Иллюстрированный). Նրա առաջին, այն է ներկայ 1879 ամի, տարեկան տետրը արդէն տպագրված է և կը հրատարակվի առաջիկայ ապրիլին։ Գինն բաժանորդ գրուիլ ցանկացողայ համար է 1 ռուբլ արծ. հանդերձ առաքմամբ։

—

Կը հրատարակվի շաբաթ նաև ապագայ ընթերցանութեան համար Հայկական Զուարթ» Անգղիական վէպ պատկերազարդ հայերէն թարգմանութիւնը։ Սոանալ կարելի է «փարոս Հայաստանի» հանդիսի հրատարակչից։ Գինն հանգերձ առաքմամբ է 10 կոպ. արծաթ.

Հրատարակիչ «փարոս Հայաստանի» հանդիսի

Զարմայր Մ. Մսերեանց։

Նամակաց հասցէն գրելու է այսպէս. Въ Москву, близъ Меньшиковой башни, д. Милованова. Г Зармайру Мсеріанцъ.

Կ. Պօլսում և Տաճկաստանի գաւառներում «Մեղու Հայաստանի» լրագրին ստորագրվել ցանկացողները կարող են դիմել կ. Պօլիս առ պ. Պարոյր գրավաճառ Ղուկասեան, պ. Սարգիս էֆենդիի գրավաճառանոցը, եկնիճամի փողոց, Չիլինկիրլէր ճաշէսի։

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ։ Ամենայն փափագ ունեցողներին, որոնք կը կամենան ունենալ Հայոց հարցի վերայ գրուած ամենայն կարևոր գրուածները, ինչպէս և